

## Ա.

Յեղափոխական Մաթիկը - Մատթէոս Արտաշէս Սերգէյ Մելիքխանեանց - ինչպէս հպարտագին արտասանեց ինծի իր աւագանի, ծիսական դպրոցի, Մոսկուայի Փաքիւլթէի մարզերուն կրած զանազան անունները, երբ պարտաւորուեցաւ ծնունդ մը, դպրոց մը, առնուազն պատանութիւն մը ճարել, հերքելու համար արդար իմ տարակոյսը թիֆլիսէն Պրոսա ահաւոր հեռաւորութեանց դիմաց (տարածութիւն մը, զոր այն օրերուն ցամաքով անհնար էր կտրել-անցնիլ հազար անգամ չսպաննուած) ինքզինքը ներկայացուց իբր պատուակալ ուսանող (Փանջունին կրցա՞ծ էր տեսնել զայն, ծնունդէն առաջ) Մոսկուայի բժշկական Փաքիւլթէին ատամնաբուժական սեկցիայում: Այն օրերուն համալսարանը (մա՛նաւանդ գերմանական մարգայով) աւարտողները նոր կը սկսէին իրենց հերոսական պայքարը դոքտոր տիտղոսին ետեւէն. համալսարանին իբր ազնուականացման անհերքելի փաստը մատուցուած իրենց սկզբնական փառասիրութեանց: Մաթիկ Մելիքխանեանց կամ աւելի պարզ ու շիք՝ Սերգէյ Մելիք, իբր ժողովուրդի հարազատ տրիբուն ու պիոներ, մորթեր էր տիտղոսները, թուրքիա մտնելուն զուգահեռաբար, թեթեւալով աւելորդ զգեստէն ու պատուանշաններէն (թէեւ տարօրէն խռովիչ էր իր յամառութիւնը